

Բաղադրյալ թվերի վերլուծությունը պարզ արտադրիչների

Թվերը վերլուծել պարզ արտադրիչների նշանակում է այն ներկայացնել պարզ թվերի արտադրյալի տեսքով:

Օրինակ՝ 10 թիվը վերլուծենք պարզ արտադրիչների, այսինքն այն ներկայացնենք պարզ թվերի արտադրյալի տեսքով՝ $10=2 \cdot 5$, որտեղ 2-ը և 5-ը պարզ թվեր են:

$$\begin{array}{r|l} 10 & 2 \\ 5 & 5 \\ 1 & \end{array}$$

Առաջադրանքներ.

1. Թվերը վերլուծեք պարզ արտադրիչների:

- 14
- 21
- 15
- 16
- 25
- 32
- 42
- 60

Այժմ թվերը պարզ արտադրիչների վերլուծելով՝ գտեք նրանց ընդհանուր պարզ արտադրիչները.

Օրինակ՝ 6 և 10 թվերի ընդհանուր պարզ արտադրիչները գտնելու համար 6 և 10 թվերը վերլուծենք պարզ արտադրիչների:

6	2	10	2
3	3	5	5
1		1	

$6=2 \cdot 3$, $10=2 \cdot 5$, 2-ը կոչվում է 6 և 10 թվերի ընդհանուր պարզ արտադրիչ:

Այն բնական թվերը, որոնք ընդհանուր պարզ արտադրիչներ չունեն, կոչվում են փոխադարձաբար պարզ թվեր:

Փոխադարձաբար պարզ են այն թվերը, որոնց ընդհանուր բաժանարարը միայն 1-ն է:

Օրինակ՝ 5 և 7 թվերը փոխադարձաբար պարզ թվեր են:

2. Թվերը պարզ արտադրիչների վերլուծելով՝ գտեք նրանց ընդհանուր պարզ արտադրիչները

- 14 և 10
- 10 և 25
- 15 և 20
- 24 և 15
- 8 և 12
- 12 և 10
- 16 և 28
- 10 և 3
- 7 և 8
- 5 և 12